Այդպէս մոտածելով նա բարձրացաւ սարի գագաթը ծածկուած անտառով. յանկարծ նա լսեց որ նրան գոռումն. —կ-ց։

Վաճառականը նստ մոտիկ տուեց և տեսաւ սարի գագաթը երկու Զինուց աւազակ։ Նա խփեց ձիոյն, որը փախաւ, աւազակները չցանկանալով ձեռներիցը որսը թողնել, կրակեցին նորա վերայ հրացանները, բայց հրացանները խարեցին, և վաճառականը կարողացաւ հասնել սարի գագաթը, որի տակին գտնվումէր գիւղը։—

Ազատվելով վտանգից նա մոտածեց և սկսեց փաղաք տալ այն բանին՝ որի վերայ միքիչ առաջ տրտնջումէր։

Ինչպէս ես կարողացայ տրտնջալ Աստուածութեան վերայ, մոտածեց նա, եթէ եղանակը լաւ կլինէր՝ էն ժամանակը հրացանները չէին խարել . . . . . եթէ անձրեր չմրջէր վառօղին, էն ժամանակը ես կոպանվէի կամ մեծ վէրք կստանայի։

Այս բանը միտս է բերում՝ մարս խօսքերը, որը շատ անգամ ասումէր, չէ հարկաւոր Աստուծոյ վրայ տրտնջալ։

Մեզ շատ անգամ թւումէ, որ շատ բան մեզ վնաս է, բայց էս ամէնը տանումէ դէպի բարին. ամէն բան չի լինել մեր ցանկութեան համեմատ, մենք ամէնքս անիսօս պէտք է հպատակենք Աստուծոյ, առանց որին մեզանից վեր չի ընկնի ոչ մէկ մազ։

Թարգ. Կոստանդ Ռէբէկեան։

1871 -դ
յեր-ն։

Ա Զ Գ Ա Ց Ի Ն

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Նորին Սրբութիւն Վեհ. Կաթուղիկոսն ամենայն Հայոց բնակութիւն կալած է արտաքոյ Տփխիս քաղաքին այգեստանեայց մէջ յայգետունն Մեծ. Պ. Աղէքսանդրի Թահիրեանց՝ անձնական տկարութիւնը ըստ արժանւոյն կաղդուրելոյ համար։

ՏԻԿԻՆ ԱԿԻՒԼԻՆԷ ԱԼԱՃԱՆԵԱՆՑ

Նոր-Նախիջևանցի բարեպաշտուհի Տիկին Ակիւլինէ Ալաճանեանց՝ ի յիշատակ իւր և հանգուցեալ առն իւրոյ Սարգսի Ալաճանեանց՝ էրկու հազար ռուբլի ընծայեց Մայր Աթոռոյս Նորաշէն ճեմարանին, և այժմէն այս գումարը դրուեցաւ ի դրամատունն ի Թասթօվ քաղաքի. որպէս զի շահվի՝ մինչև նորա տոկոսիք բաւական լինին ի սնունդ և ի դաստիարակութիւն միոյ աշակերտի։

Այս առաքինասէր տիկինն նաև օրինաւոր կտակաւ ուխտած է Նոր-Նախիջևանի հանգստարանի մէջ մի եկեղեցի շինելոյ հանդերձ հարկաւոր պարագայիքքն, ուստի երանի՜ նմա որ գիտաց իւր ծերութեան հասակին ողևորեալ բարեսիրութեամբ՝ ունեցած դրամական կարողութիւնքը ի գործ ածել յօգուտ Ազգի և Եկեղեցւոյ, որով և անմահացոյց զանուն և զյիշատակ իւր և հանգուցեալ առն իւրոյ Սարգսի Ալաճանեանց։

Երդ սոյն ջերմեռանդ տիկնոջ բաղում գովեստից արժանի այս առաքինութիւնքը հրատարակելով՝ ի տեղեկութիւն Ազգայնոց մերոց, նաև սիրելի է մեզ հրապարակական շնորհակալութեամբք մեր խորին երախտագիտութիւնքը յայտնել ամենագոյս միջոցաւ։

ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵՒՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ

(Շարունակութիւն)։

ՍԻՄՅԵՐԱՊՈԼ։

	— ֆ.
Մարկեան Մոմճեան	3
Կարապետ Թղճեան	1
Կարապետ Բայալեան	1